

ՁԵՐ ԱՌՈՂՁՈՒԹՅՈՒՆԸ ՁԵՐ ՁԵՌՔԵՐՈՒՄ Է, ՇԵՏԱԶՈՏՎԵՔ ԵՎ ԴԱՉԴԱՆԵՔ ԱՅՆ

ՈՐՆ Է ԱՐԳԱՆԴԻ ԴԱՐԱՆՈՅԻ ԶԱՂՅԿԵՂԸ ԱՌԱԶԱՅՄԱՆ ԴԱՏՃԱՌԸ

ԻՆՉՊԵՄ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ ԴԱՊ ԶՍՈՒԿԻ ՇԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ



Արգանդի պարանոցի քաղցկեղը դատավճիռ չէ:

Հիվանդությունը ժամանակին ախտորոշելու դեպքում, կարելի է այն կանխարգելել և բուժել:

Արգանդի պարանոցի քաղցկեղի զարգացման ռիսկային խմբին են պատկանում 30-ից 60 տարեկան կանայք:

Հ ա յ ա տ ա ն ու մ ...

Արգանդի պարանոցի քաղցկեղը կանանց քաղցկեղային հիվանդությունների շարքում գրավում է երկրորդ տեղը,


Դեպքերի 60%-ից ավելին հայտնաբերվում է հիվանդության զարգացման ուշ փուլերում:

Արգանդի պարանոցի քաղցկեղը զարգանում է երկար տարիների ընթացքում և հաճախ կրում է քաքնված բնույթ:

Ժամանակին հետազոտվելով՝ կարելի է հայտնաբերել արգանդի պարանոցի քաղցկեղը դեռևս նախաքաղցկեղային շրջանում և կանխարգելել հիվանդության զարգացումը:

Կյանքում նույնիսկ մեկ անգամ ՊԱՊ քսուկի հետազոտության իրականացմամբ կարելի է նվազեցնել քաղցկեղի առաջացման հավանականությունը 35%-ով, իսկ յուրաքանչյուր 3 տարին մեկ անգամ հետազոտվելով՝ 80%-ով:

Հիվանդության պատճառը մարդու պապիլոմավիրուսն է (ՄՊՎ): Այն ախտահարում է արգանդի պարանոցի բջիջները և կարող է նպաստել քաղցկեղի զարգացմանը:



ԻՆՉՊԵՄ ԿԱՐԵՒԻ Է ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԱՐԳԱՆԴԻ ԴԱՐԱՆՈՅԻ ԶԱՂՅԿԵՂԸ

Արգանդի պարանոցի նախաքաղցկեղի և քաղցկեղի վաղ փուլերը որևէ կլինիկական դրսևորումներ չունեն: Վաղ ախտորոշման լավագույն մեթոդը քսուկի բջջաբանական հետազոտությունն է, որը կոչվում է ՊԱՊ քեստ: ՊԱՊ քեստը թույլ է տալիս հայտնաբերել փոփոխված, նախաքաղցկեղային բջիջները:

ՊԱՊ հետազոտության համար անհրաժեշտ է արգանդի պարանոցից վերցնել քսուկ և լաբորատոր քննությամբ ի հայտ բերել բջիջների փոփոխությունը:

ՈՐՈՂԸ ԵՆ ՌԻՍԿԻ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

- ⌘ Վաղ սեռական կյանքի սկիզբ՝ դեռահասության տարիքում
- ⌘ Վաղ հղիություն՝ դեռահասության տարիքում
- ⌘ Զուգընկերների փոփոխություն
- ⌘ Ծխախոտի օգտագործում
- ⌘ ՄԻԱՎ վարակ
- ⌘ Ժառանգական նախատրամադրվածություն

